

Արցախի հյուսիսարևելյան շրջանների սահմանամերձ բնակավայրերի վերականգնման առաջնահերթ ծրագրերը

Մարտակերտի շրջանի տարածքը 1795,07 քառ.կմ է: Շրջանն ունի 1 քաղաքային համայնք, 42 գյուղական համայնքներ, 52 գյուղական բնակավայրեր: Բնակչության թվաքանակը 2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմում է 20 886 մարդ: Գյուղատնտեսական նշանակության հողերը 58455,61 հա է, որից վարելահողեր՝ 19265,89 հա, սեփականաշնորհված հողեր՝ 6126,67 հա, խոտհարք՝ 1742,63 հա, արոտավայր՝ 30867,38 հա, բազմամյա տնկարկ՝ 93,98 հա, այլ հողատարածքներ՝ 6485,73 հա:

Արցախի պատմության մեջ ունեցած դերով, այստեղ առկա հսկայական հնագույն պատմաճարտարապետական եզակի կոթողների քանակով, ինչպես նաև անգուգական բնությամբ Մարտակերտի շրջանն առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում: Բավական է նշել, որ Արցախի Հանրապետության տարածքում մինչև այժմ հայտնի հայկական հուշարձանների շուրջ 40 %-ը գտնվում է Մարտակերտի շրջանում: Մարտակերտի շրջանի տարածքով են հոսում երկու համեմատաբար խոշոր՝ Թարթառ (նախկինում՝ Տրտու) և Խաչեն գետերը՝ իրենց բազմաթիվ վտակներով:

Շրջանի տարածքը հարուստ է գունավոր մետաղների բազմամետաղ հանքավայրերով՝ պղնձի, ոսկու և այլ մետաղներով, բազալտի, տուֆի, կրաքարի պաշարներով: Շրջանի մոտ 100 հազար հա տարածք անտառածածկ է: Արցախի Հանրապետության անտառների կեսից ավելին գտնվում է Մարտակերտի շրջանում:

Մեր երկիրն ագրարային երկիր է, ուստի նրա տնտեսության բնութագիրն իր պատմության ընթացքում միշտ էլ կախված է եղել նրա գյուղատնտեսության ոլորտի զարգացման մակարդակից: Բնագավառում կատարվող ամեն մի դրական կամ բացասական քայլ, անկասկած, իր դրոշմն է թողել ոլորտի հետագա զարգացման վրա: Շրջանի գյուղատնտեսությունը պատերազմից հետո հայտնվեց աննախանձելի վիճակում, որն, անտարակույս, մտահոգության տեղիք էր տալիս: Պարբերաբար կրկնվող պատերազմական գործողությունները միշտ էլ իրենց բացասական ազդեցությունն են թողել գյուղատնտեսության ոլորտի զարգացման վրա: Երկրամասը միշտ էլ մեծ զրկանքներ է կրել պատերազմական գործողություններից: Ապրիլյան քառօրյա պատերազմով և հետագա օրերի լարվածությամբ պայմանավորված՝ Արցախի Հանրապետությունում տնտեսական խնդիրներ առաջացան: Զգալի կորուստներ ենք ունեցել հատկապես սահմանամերձ բնակավայրերում՝ մեծ քանակությամբ ցանքատարծքներ են ոչնչացվել, անասնազվիաքանակի կորուստներ, ուրբակոծությունից վնասված տեխնիկա, որի զգալի մասը նոր էր ձեռք բերված:

Շրջանի հողատարածքների հիմնական մասը զբաղեցված է հացահատիկային մշակաբույսերի արտադրությամբ: Հացահատիկայինների մշակության ոլորտում մենք նույնիսկ գերազանցում ենք պահանջված քանակին և կարողանում

արտահանել: Դրան են նպաստում գյուղատնտեսության նախարարության կողմից առաջարկվող մի շարք աջակցության ծրագրերը: Ինչ խոսք տարեցտարի ավելանում է մշակվող հողատարածքների քանակը: Մակայն այս ամենի կողքին ունենք ռոռզման ջրի խնդիր, որը միշտ էլ առաջնային ու հրատապ է եղել: Ցավոք Մարսանգի ջրամբարի ջրային ռեսուրսները գյուղատնտեսության համար չենք կարողանում օգտագործել. ջրի հիմնական ծավալներն օգտագործվում են միայն էներգետիկ նպատակներով: Չնայած, որ պետության օժանդակությամբ ռոռզման համակարգերի վերականգնման և զարգացման ուղղությամբ զգալի աշխատանքներ են իրականացվել, այդ բնագավառում դեռևս բազում խնդիրներ կան: Մահմանամերձ գյուղերում ձեռքբերումներն ու դրական տեղաշարժն ավելի շոշոփելի կարող էին լինել, եթե մեր երկիրը անցումային փուլ ապրող երկրների տնտեսությանը յուրահատուկ դժվարությունների հետ միասին չժառանգեր արցախյան հակամարտության և շրջափակման մեջ լինելու փաստը: Հատկանշական է «Գյուղի և գյուղատնտեսության աջակցության» հիմնադրամի միջոցներով կառուցված` Հանրապետությունում առաջին անձրևային համակարգի հիմնումը: Նպատակային է, որ այսպիսի համակարգը կառուցվել է հենց սահմանամերձ Թալիշ գյուղում: Նույնատիպ համակարգերի կառուցումը շարունակական բնույթ է կրելու, որը և նպաստելու է սահմանամերձ գյուղերի տնտեսական զարգացման ցուցանիշների բարձրացմանն ու բնակչության բարեկեցության ապահովմանը: Մահմանամերձ գյուղերի խնդիրների լուծումը միշտ էլ առաջնահերթ է եղել: Ուստի Արցախի Հանրապետության կառավարությունը հատուկ ուշադրությամբ է հետևում բնակչությանը հուզող խնդիրներին և հնարավորինս աջակցություն ցուցաբերում:

Շրջանը բացառիկ դեր ունի նաև էներգետիկայի բնագավառում: Այստեղ է գտնվում հանրապետության էլեկտրաէներգետիկայի արտադրության հիմնական ներուժը: Հատկանշական են Մատաղիս բնակավայրում, Թրդե գետի վրա կառուցված ՀԷԿ-երը, ինչպես նաև մոտ ապագայում Տոնաշեն համայնքի վարչական տարածքում կառուցվող միկրո ՀԷԿ-երը:

Խրախուսելի է Մատաղիս համայնքում գործող ձկնաբուծարանի կառուցումը: Ծրագիրը խոստումնալից է ու հետագայում կընդլայնի նաև արտադրությունը: Այն նաև բազմաթիվ նոր աշխատատեղեր է ապահովում` ոչ միայն Մատաղիս համայնքի բնակիչների համար, այլ նաև շրջակա համայնքների:

Ողջունելի են օտարերկրյա անհատների ներդրումները: Հատկապես 2016 թվականի ապրիլյան պատերազմից հետո բնակչությունը մեծ ոգևորությամբ ընդունեց ռուսաստանաբնակ բարերարի աջակցությամբ Մատաղիս համայնքում հանգստյան գոտի կառուցելու նախաձեռնությունը: Այժմ արդեն սահմանամերձ բնակավայրում ունենք բարեկարգ ու գեղատեսիլ հանգստյան գոտի, որը խթան կհանդիսանա նաև տուրիզմի զարգացման համար:

Առաջընթաց է ապրում նաև սահմանամերձ Մարտակերտը: Հատկանշական է «Մարտակերտի բարիքներ» ՄՊԸ չրերի նորաբաց գործարանը, որը կառուցված է արդի տեխնոլոգիաներով: Գաղափարը կյանքի է կոչվել պետական աջակցությամբ՝ ապահովելով մոտ 30 աշխատատեղ: Կյանքի է կոչվում ևս մեկ՝ կոմպոտների ու մուրաբաների գործարանը, որը նոր թափ կհաղորդի արտադրամասի զարգացմանը:

Զգալի հաջողություններ ունենք նաև այգեգործության բնագավառում: Այսօր արդեն Արցախի Հանրապետության տարածքում աճեցվում են այնպիսի ծառատեսակներ, որոնք նախկինում չկային: Այժմ ծրագրեր են մշակվում նաև այգիներ հիմնադրելու նպատակով: Կառավարությունը խրախուսելու է բոլոր այն անհատներին, ովքեր կհիմնեն նաև այգիներ և դրանց ոռոգումը պարտադիր կիրականացնեն կաթիլային եղանակով:

Պետության աջակցությունից օգտվում են նաև ֆերմերային տնտեսությամբ զբաղվող անհատները: «Գյուղի և գյուղատնտեսության աջակցության» հիմնադրամը սուբսիդավորման կարգով վարկեր է տրամադրում՝ անասնապահության զարգացման համար, ինչպես նաև տեխնիկա ձեռք բերելու նպատակով: Ժամանակակից մեթոդների կիրառումը գյուղատնտեսության բնագավառում անհրաժեշտություն է ու, անկասկած, նոր թափ կհաղորդի ոլորտի զարգացմանը:

Պատերազմից հետո մեծ թափ ստացավ նաև բնակարանաշինության գործընթացը՝ ինչ խոսք հիմնական միջոցները, աջակցության ծրագրերը կենտրոնացան հիմնականում սահմանամերձ բնակավայրերում: Ներկա պահի դրությամբ էլ բուռն աշխատանքներն ընթացքի մեջ են: Սահմանամերձ Թալիշում ավարտման փուլում են գտնվում հանդիսությունների տան, համայնքային կենտրոնի, մանկապարտեզի, դպրոցի կառուցման աշխատանքները: Ահեղի աշխատանք է տարվել բնակելի տների վերականգնման ասպարեզում, սակայն անելիքները դեռ շատ են:

Մատաղիս համայնքում ավարտվել է արդեն դպրոցի վերանորոգումը, ծրագրվում է նաև մանկապարտեզի՝ մոտ 50 տեղանոց և դպրոցին կից սպորտդահլիճի կառուցումը: Համայնքի բնակելի տները լրիվությամբ վերականգնվել են: Կառավարության աջակցությունը շատ կարևոր էր, դրանով էր պայմանավորված այն փաստը, որ սահմանից մի քանի կմ հեռու գտնվող արցախցին չլքեց իր հարազատ օրրանը:

Մարտակերտ քաղաքում ևս բնակելի տների վերականգնման զգալի աշխատանքներ են իրականացվել: Գործընթացը հիմնականում ավարտման փուլում է գտնվում: Կարևոր ձեռքբերում էր նաև ջրագծերի ներքին ցանցի լրիվությամբ նորոգվելը. այժմ արդեն ունենք շուրջօրյա ջրամատակարարում:

Շարունակվում է նորանոր աջակցության ծրագրերի մշակումը: Այժմ երիտասարդ ընտանիքներին անհատույց տրամադրվում է մինչև 3 մլն. դրամական արժողությամբ գումար՝ կիսակառույց տների վերականգնման նպատակով:

Բազմազավակության խթանման ոլորտում ևս առաջընթաց է գրանցվել: Եթե նախկինում 6 երեխաներ ունեցող ընտանիքների համար էր տուն կառուցվում, այժմ արդեն՝ 5:

Վերջերս է ավարտվել նաև հյուսիս-հարավ մայրուղու Մարտակերտ-Վարդենիս ճանապարհահատվածի կառուցումը, որը շրջանի տնտեսության զարգացման համար առավել արդյունավետ է: